ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԲԱԳԱՐԱՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԴԱՎԹՅԱՆԻ
(1890—1963)

Ապրիլի 20-ին, Մադրաս քաղաքում, ի Տեր հանգյավ ծխատեր արժանապատիվ Տ. Բագարատ ավագ քահանա Դավթյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1890 թվականին Նոր-Ջուղայում։ Նախնական իր կրթությունն ստացել էր տեղի ազգային կենտրոնական վարժարանում և այնուհետև ընտրել էր ազգային ծառայության ճանապարհը, որպես պաշտոնյա և Նոր-Ջուղայի Մեյդանի թաղի Ս. Աստվածածին եկեղեցու վարչության անդամ։

1937 թվականին, Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, հետևելով մեկ տարի եկեղեցական և կրոնական ուսմանց, դպրեվանքի տեսուչ Տ. Թեոդորոս ծայրագույն վարդապետի ձեռքի տակ, Թավրիզում քահանա է ձեռնադրվել հանգուցյալ Տ. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի ձեռքով։

Այնուհետև արժանապատիվ Տ. Բագարատ քահանան հովվական պաշտոններ է վարել Նոր-Ջուղա, Դաքքա (Արևելյան Պակիստան), Մադրաս և Կալկաթա քաղաքներում։ Հանգուցյալն իր բարվոք ծառայության համար վարձատրվել է ծաղկյա փիլոնով և քահանայական լանջախաչ կրելու իրավունքով, Վազգեն Վեհափառ Հայրապետի կողմից, 1955 թվականին։

Հանգուցյալի վերջին օծումը կատարել է և թաղմանական արարողությանը նախագահել Կալկաթայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետ Սահակյանը, 1963 թվականի ապրիլի 20-ին։ Հանգուցյալի աճյունը ամփոփվել է Մադրասի հայոց գերեզմանատանը։

Տ. Բագարատ քահանա Դավթյանը հավատավոր, գիտակից և պարտաճանաչ հոգևորական էր և իր լավագույն ուժերը նվիրել էր հեռավոր ափերի վրա նետված հայ ժողովրդի թանկագին բեկորների հոգևոր և ազգային դաստիարակության սուրբ գործին։

Հանգի՜ստ նրա ոսկորներին։